

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

08.01.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Գ.Տոնոյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ա.Աղլոյանը, Ս.Ղուբաթյանը, Վ.Դոխոյանը, Հ.Մկրտչյանը, Ս.Ասրյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. ա) ՀՀ Վարչապետի հանձնարարականի (14 կետեր ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից 07.12.2017թ.) մասին

բ) Մարզպետարանի աշխատակազմի և համայնքների հաշվետվությունների կազմակերպման և ժամկետների մասին

/Ա.Նալբանդյան/
2. Նախորդ տարվա վերջին ստացված հանձնարարականների կատարման ընթացքի մասին

/Զեկ. Ն.Սարգսյան/
3. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին (2017թ)

/Զեկ. Հ.Պապոյան/
4. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի համայնքների կողմից աղբահանության վարձավճարների սահմանման, պայմանագրերի կնքման և դրանց հավաքագրման նկատմամբ, առաջարկել համայնքների ղեկավարներին աղբահանության վարձավճարների գանձման ինքնաձեռնարկային մեթոդի կիրառումը:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`

ա/ Ըստ ոլորտների անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել ՀՀ Կառավարության նիստի ընթացքում տրված հանձնարարականների սահմանված ժամկետներում կատարման ուղղությամբ և ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն:

բ/ Կազմված ժամանակացույցի համաձայն ըստ ոլորտների 15.01.2018թ-ից մինչև 01.02.2018թ-ը սահմանված կարգով ներկայացնել ստորաբաժանման հաշվետվությունը:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին`

ա/ Համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների ներկայացման ընթացքում որպես առանձին եկամտատեսակ ներառել նաև համայնքների կողմից աղբահանության վարձավճարների գանձումը.

բ/ Շրջաբերականով դիմել համայնքների ղեկավարներին` առաջարկելով ճշտված բյուջեներում նախատեսել և ապահովել մեկ շնչին ընկնող եկամուտների աճ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին`

Հնարավորինս սեղմ ժամկետներում ԶՕԸ-ների հետ գույքագրել մարզում առկա ոռոգելի գյուղնշանակության հողերը և ներկայացնել առաջարկություններ դրանց հետագա արդյունավետ օգտագործման վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին`

Կրթության ոլորտի բարեփոխումների և կառավարման համակարգի կատարելագործման շրջանակներում կատարել անհրաժեշտ ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ